

ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

175-ԱՄԵԱՅ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ

(Հիմնադրույթեան յորելեանին առթիւ)

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը բովանդակ հայութեան սրբազան ու հոգեւոր կեդրոն ըլլալէն զատ, դարեր շարունակ և այսօր ալ կ'իրականացնէ իր հայապահպան գործունէութիւնը: Անգնահատելի է Պատրիարքարանի դերը հայ մշակոյթի զարգացման գործին: Հոս ոչ միայն պատրաստուած են նուիրեալ հոգեւոր գործիչներ, այլև գիտնականներու ու մտաւորականներու փաղանգ մը, որոնք իրենց մեծ նպաստը բերած են հայ ձեռագրագիտութեան, և առհասարակ հայագիտութեան զարգացման գործին: Այս առումով առանձնակի կարեւորութիւն ունեն Պատրիարքարանէն ներս տպարանի և ժառանգաւորաց Վարժարանի հիմնադրութիւնը:

Եւրոպա կատարած իր այցէն վերջ, Զաքարիա Վարդապետ Կոփեցի Եւրոպական քաղաքներու մէջ իր տեսածի ազդեցութեան տակ, կը մտադրէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը օժտել երկու կարեւոր հաստատութիւններով՝ տպարան և ճեմարան:

Կարճ ժամանակ վերջ տպարանի հիմնադրման իր մտադրութիւնը կ'իրականանայ, Եգիպտահայ Մահտեսի Ալեքսան Եղիազարեանի առատաձեռն նուիրատուութեամբ: 1833 թ. Եգիպտոսէն կը հասնի տպագրութեան մեքենան և Յունուար ամսուն լոյս կ'ընծայուի առաջին գիրքը՝ «Տետրակ Աղօթամտոյց»-ը¹: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան տպարանը կը հանդիսանայ Ս. Քաղաքի առաջին տպարանը և այս տարի կը նշուի տպարանի հիմնադրման 185-ամեակը:

Ճեմարանի հիմնադրութիւնը կը յետաձգուի տարբեր պատճառներով: Այն իրականութիւն կը դառնայ միայն Զաքարիա Վարդապետի՝ Երուսաղէմի Հայ Պատրիարք ընտրուելէ ետք: Տ. Սաւալանեանցն իր «Պատմութիւն Երուսաղէմի» գրքին մէջ կը գրէ. «Զաքարիա ինքն է որ նախաձեռնարկ կ'ըլլայ նաեւ ժառանգաւորաց Վարժարանի հաստատութեան՝ առաջին անգամ բանալով զայն Ռամլէյի մէջ, ու հայերէն լեզուի ուսուցիչ կարգելով Խաչատուր քահանայ Տարօնեցին և հոգաբարձու՝ Ստեփան վարդապետ Տիգրանակերտցին: Եւ որպէսզի բարեկարգ ընթանայ վարժարանը՝ իր յանձնարարութեամբ փոխանորդ Կիրակոս Եպիսկոպոս և քանի մը առաջաւոր վարդապետներ տասը յօդուածներէ բաղկացեալ կանոնագիր մը կը պատրաստեն՝ ուսմանց աստիճաններու, ուսուցիչներու և ուսանողներու պարտականութեանց վերաբերեալ: Իբր մէկուկէս տարի յետոյ Զաքարիա վարժարանը կը տեղափոխէ Երուսաղէմ առանձին տան մը մէջ, և ուսուցիչ կը կարգէ Արմաշի վանքին Մուրատ վարժապետը: Մուրատ վարժապետ կը դասախօսէ Քերականութիւն, Տրամաբանութիւն և Ճարտասանութիւն»²:

Զաքարիա Պատրիարքի յաջորդ Կիրակոս Պատրիարք, 1847 թ. Վարժարանն

¹ Նշանեան Եպս. Մ., Տպարան Առաքելական Աթոռոյն Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1933, էջ. 2:
² Սաւալանեանց Հ. Թ. Տ., Պատմութիւն Երուսաղէմի Ա. եւ Բ. Հատոր, Երուսաղէմ, 2000, էջ. 1026-1027:

աւելի զօրացնելու համար զայն կը տեղափոխէ Սրբոց Յակոբեանց վանքի այն սրահը, որ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքը կառուցած էր Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի համար: Ժառանգաւորաց Վարժարանը կը յանձնուի Լիմ Անապատի միաբան Սիմէոն Վարդապետին: Վարժարանէն ներս դասաւանդելու համար կը հրաւիրուի նաեւ այդ օրերու մեծ մտաւորական և ուսուցիչ Տիգրան Սաւալանեանցը:

1860 թ. Պատրիարք կ'ընտրուի Յովհաննէս Զմիւռնացի: Պատրիարքարանի շէնքի կառուցումէն ետք ան կը ձեռնարկէ Վարժարանի շինութեան, որ կ'աւարտէ 1857 թ., սակայն բացման կը նախագահէ անոր յաջորդ՝ Եսայի Արք. Թալասցին: 1874 թ. «Սիօն» ամսագրի Յուլիս ամսուան թիւէն կը տեղեկանանք, որ Ժառանգաւորաց Վարժարանին մէջ կը դասաւանդուէին տասնէ աւելի նիւթեր. Հին և Նոր Կտակարանի Պատմութիւն, Բարոյախօսութիւն, Պատմութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, Հին դարու պատմութիւն, Բնապատմութիւն, Բնագիտութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Գրահաշիւ, Գծագրութիւն, Երաժշտութիւն (ձայնական), Հայկաբանութիւն, Գաղիերէն (Ֆրանսերէն) և Տաճկերէն (Օսմաներէն, Թուրքերէն): Ըստ Սիօն ամսագրի տեղեկութեան՝ Վարժարանը եղած է Երուսաղէմի այնքան կարեւոր կրթական հաստատութիւններէն մին, որ ամալերջին հանդէսներուն մասնակցած է նաեւ քաղաքի կառավարիչը: Օրինակ, 1874 թ. ամալերջի հանդէսին ներկայ եղած է Երուսաղէմի կառավարիչ Վսեմաշուք Քեամիլ փաշան³:

Յարութիւն Վեհապետեան Պատրիարքի գահակալութեան տարիներուն, 1885-1910 թթ. նշանաւոր կը դառնայ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը, ուր կը սորվէին ընդհանուր թիւով 250 աշակերտներ:

1911-ին Վարժարանի տեսչութիւնը կը ստանձնէ Մեսրոպ Վրդ. Նշանեան, որու տեսչութեան ընթացքին սակայն յատկանշական արդիւնք մը չի արձանագրուիր, Առաջին Համաշխարհային Պատերազմին՝ Պատրիարքութեանս պատճառած տնտեսական տագնապին պատճառաւ: Իր յուշերուն մէջ Մեսրոպ Վարդապետ կը գրէ, թէ տնտեսական տագնապն այնքան զօրաւոր էր, որ կը պարտադրէր Պատրիարքարանն առժամապէս փակել Ժառանգաւորաց Վարժարանը 1915 թ. Օգոստոս 31-ին:

1916 թ. Հոկտեմբեր 19-ին, Սահակ Կաթողիկոս Դպրանոց անունին տակ կը վերաբանայ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը, լսարանական երկու բաժանմունքներով, սակայն այս եւս կ'ըլլայ խաբուսիկ և կարճատեւ, որովհետեւ 1917 թ. Ապրիլ 26-ին տարեց աշակերտներ զինուորագրուելով կը պարտադրուին մեկնիլ Դամասկոս⁴:

Առաջին Համաշխարհային պատերազմի զինագաղարէն ետք, 1921-ին Երուսաղէմի Հայ Պատրիարք կ'ընտրուի Եղիշէ Արք. Դուրեան, որուն առաջին գործը կ'ըլլայ Հայ հոգեւորականներ պատրաստելու «սուրբ վրէժխնդրութիւնը»: Որպէս Ժառանգաւորներ՝ կ'ընդունուին Մեծ Եղեռնին որբացած պատանիներ, և տեսուչ կը նշանակուի Բարգէն Եպս. Կիւլէսէրեան:

1931 թուին Թորգոմ Պատրիարք Գուշակեանի գահակալութեամբ, Ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը կը դառնան անոր յատուկ խնամքի առարկայ: 1932-ին տեսչութիւնը կը ստանձնէ Տիրան Վրդ. Ներսոյեան: 1934 թ. ուսուցչութեան կը հրաւիրուին երկու մեծանուն մտաւորականներ՝ գրականագէտ Յակոբ Օշական և մանկավարժ-իմաստասէր Շահան Պէրպէրեան: Այդ տարիներուն աշակերտ կ'ընդունուին արաբական երկիրներէն՝ Լիբանանէն, Սուրիայէն, Իրաքէն և այլն:

1921-ին Արեւելեան Հայաստանի խորհրդայնացումէն ետք, կը փակուի Մայր

³ «Սիօն», 1874, էջ. 159:

⁴ Արզումանեան Ա. Քհն. Ջ., Ազգապատում, Դ Գիրք, Ա Հատոր, Ս. Վարդան Մատենաշար, Նիւ Եորք, 1995, էջ. 285:

Աթոռ Ս. էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանը: Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ենթակայ հոգեւոր դպրանոցներ եւս կը փակուին թրքական նոր կառավարութեան կողմէ: Ասոր իբր հետեւանք, 1950-ական թուականներու Սփյուռքի հին և նոր ձեւաւորուող համայնքներուն համար հոգեւոր սպասաւորներ մատակարարելու լուրջ խնդիր կ'առաջանայ: 1970-ականներուն խնդիրը աւելի կը սրի և հրատապ լուծում կը պահանջէ: Իբրեւ լուծում՝ կ'որոշուի Սփիւռքի մէջ նոր ճեմարան մը հիմնել և այնտեղէն հոգեւորականներ մատակարարել հայկական համայնքներու կարիքներուն համար: Յարմարագոյն վայրը կ'ընտրուի Երուսաղէմը: Այս առումով, ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի պատմութեան մէջ բացառիկ տարի մը կ'ըլլայ 1971 թուականը: Ապրիլ 21-ին հիմնարկէքը կը կատարուի Վարժարանի նոր շէնքին, որը պիտի կառուցուէր Ալեք և Մարի Մանուկեան զոյգի նուիրատուութեամբ: Չորս տարի ետք Վարժարանին նոր շէնքը արդէն պատրաստ էր, որուն պաշտօնական բացումին հրաւիրուած էր Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսը: Անդրադառնալով այս դէպքին՝ Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան իր «Ազգապատում» գիրքին մէջ կը գրէ. «1975 թ. Յունիս 25-ին խանդավառ իրադրութեան մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսն, իր կողքին ունենալով Եղիշէ և Շնորհք Պատրիարքներն ու Մանուկեան ամուլը, բացումը կը կատարէր ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի նոր շէնքին, որուն արեւելեան պատին դրոշմուած էր հետեւեալ արձանագրութիւնը. «ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԺԱՌԱՆ ԳԱԻՈՐԱՅ ՎԱՐՎԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆ»⁵:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք 1991 թուականէն սկսեալ, երջանկալիշատակ Թորգոմ Պատրիարք Մանուկեանի նախաձեռնութեամբ աշակերտներ կը բերուին նաեւ Հայաստանէն: 2017 թ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի նախաձեռնութեամբ առաջին անգամ Վարժարան ընդունուած են Համշէնահայեր:

Վարժարանն ունի երկու բաժին. ժառանգաւորաց Վարժարան, ուր ուսման տեւողութիւնը չորս տարի է և Ընծայարան՝ երեք տարի ուսման տեւողութեամբ: Վարժարանի բաժինն մէջ կը դասաւանդուին Երուսաղէմի Պատմութիւն, Վարք Սրբոց, Աստուածաշնչի Պատմութիւն, Տոմարագիտութիւն, Մշակոյթի Պատմութիւն, Անգլերէն, Եբրայերէն, Արաբերէն, Հին և Նոր Կտակարանի ներածութիւն, Քրիստոնէական, Հայոց լեզու և գրականութիւն, Հայոց Պատմութիւն, Հայ և ընդհանրական եկեղեցւոյ պատմութիւն, Զայնամարզութիւն ու Եկեղեցական երաժշտութիւն և այլ առարկաներ, իսկ Ընծայարանի մէջ՝ Ծիսական Աստուածաբանութիւն, Տրամաբանութիւն, Բարոյագիտութիւն, Հոգեբանութիւն, Հին և Նոր Կտակարանի մեկնութիւն, Աստուածաբանութիւն, Տօնագիտութիւն, Իմաստասիրութիւն, Հոգեբանութիւն, Ընկերաբանութիւն, Վիճակագրութիւն, Կանոնագիտութիւն, Դաւանաբանութիւն, Աղանդաբանութիւն, Հայրաբանութիւն, Հովուական Աստուածաբանութիւն և Տեղիք Աստուածաբանութեան: Ուսուցչական կազմը կը բաղկանայ շուրջ քսան հոգեւորական և աշխարհական ուսուցիչներէ: Վարժարանէն ներս դասաւանդուած են Եղիշէ Արք. Դուրեան, Թորգոմ Արք. Գուշակեան, Բաբգէն Արք. Կիւլէսէրեան, Տիրան Արք. Ներսոյեան, Եղիշէ Արք. Տէրտէրեան, Շնորհք Արք. Գալուստեան, Թորգոմ Արք. Մանուկեան, Նորայր Արք. Պողարեան, Յակոբ Օշական, Շահան Պէրպէրեան, Գէորգ Թոսունեան և ուրիշներ: Վարժարանը ներկայիս ունի քառասուն ժառանգաւոր սաներ և Ընծայարանի ուսանողներ Հայաստանէն, Ափսազիայէն և Ռուսաստանէն:

Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը, հանդիսանալով Հայ Եկեղեցւոյ առաջին հոգեւոր կրթարանը, բազում գիտակից և նուիրեալ հոգեւորականներ կրթած ու նուիրած է ոչ միայն Երուսաղէմի Առաքելական մեր Սուրբ

⁵ Արզումանեան Ա. Քհն. Ջ., Ազգապատում, Գ Գիրք, Գ Հատոր, Ս. Վարդան Մատենաշար, Նիւ Եորք, 2003 էջ. 168:

Աթոռին, այլ նաեւ Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցիին: Մինչեւ Հայոց Մեծ Եղեռնը ժառանգաւորաց Վարժարանն առատ հունձքով հոգեւոր հովիւներ և առաջնորդներ պատրաստած է պատմական Հայաստանի երբեմնի շէն թեմերուն և ծուխերուն համար: 1921 թուականէն ետք, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի իրաւասութեան ներքոյ գտնուող համայնքներուն զուգահեռ, Վարժարանը պատրաստած և հոգեւորականներ մատակարարած է նաեւ Սփիւռքի գրեթէ բոլոր Հայկական համայնքներուն համար: Յոբելինական այս տարուան առթիւ, կրնանք արձանագրել, թէ ժառանգաւորաց Վարժարանը իբրեւ բազմարդիւն հոգեւոր դարբնոց 175 տարի թրծած է և պիտի շարունակէ թրծել հայ երիտասարդ հոգիներ, միտքեր և սիրտեր՝ զանոնք պատրաստելով Ս. Աթոռոյս և մեր Առաքելական Մայր Եկեղեցւոյ համար արժանի ժառանգորդներ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ինչ կը նշանակէ սիրել: Սիրել կը նշանակէ տեսնել չարիքը և սրբագրել զայն ներողամտօրէն: Սիրել կը նշանակէ բարձրանալ ու բարձրացնել բարեկամներն ու շուրջիները: Սիրել կը նշանակէ ազատագրել միտքն ու հոգին մփռած անցեալէն և բացուիլ ապագային:

Միակ գիտութիւն մը կայ զոր պարտինք սորվեցնել մեր զաւակներուն, այդ ալ՝ պարտականութեան գիտակցութիւնն է:

Ձիք առաքինութիւն դիւթիչ մարդկան քան զհամբերութիւն, եւ չիք բախտ այնպէս դժնդակ որում ոչ յաղթել կարասցէ այր քաջ խոհական համբերութեամբ:

Ունենալը չէ՛, վայելել գիտնալն է որ իրապէս մարդը կ'ընէ բախտաւոր:

Հոգի և դրամ երկու հակոտնեայ եզրեր են, իրար չհանդուրժող և իրար դէմ պայքարող... և երկուքն ալ անհատէն կ'ակնկալեն ամբողջական և անպայմանագրական նուիրում իրենց սպասին:

Երկար լեզուն կը կրճատէ կեանքը:

Լեզուն կակուղ միս է՝ բայց ի՛նչ ոսկորներ կը փշրէ: